ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2608 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՓՈՂՈՑԻ Հ. 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՈՒԱՐԴ ՍՈՒՐԵՆԻ ԳԱՎԱՐՅԱՆԻ, ԺՈԶԵՖ ՍՈՒՐԵՆԻ ԳԱՎԱՐՅԱՆԻ, ԼՅՈՎԱ ՄԱՐԳԱՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել էդուարդ Սուրենի Գավարյանի (ծնված 18.05.1949թ.), Ժոզեֆ Սուրենի Գավարյանի (ծնված 16.02.1943թ.), Լյովա Մարգարի Մարգարյանի (ծնված 03.01.1959թ.), Ռուզաննա Մարգարի Մարգարյանի (ծնված 23.10.1948թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Լեռ Կամսարի փողոցի հ.24 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 862քմ, որից 836քմ մակերեսով հողամասը էդուարդ Սուրենի Գավարյանին, Ժոզեֆ Սուրենի Գավարյանին, Լյովա Մարգարի Մարգարյանին, Ռուզաննա Մարգարի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է (վկայական տրված 27.05.1992թ. հ.4209): Օրինական հողամասին կից օգտագործվող 26քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1952 թվականը, 08.10.2004թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման 24.12.2008թ. հ.10554, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 13.03.2009թ. հ.20/2-Ե/111 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 03.03.2009թ. հ.20ել-1462 եզրակացությունը, համաձայն որի Լեռ Կամսարի փողոցի հ.24 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Լեռ Կամսարի փողոցի հ.24 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ էդուարդ Սուրենի Գավարյանի, Ժոզեֆ Սուրենի Գավարյանի, Լյովա Մարգարի Մարգարյանի, Ռուզաննա Մարգարի Մարգարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 836քմ մակերեսով

հողամասին կից 26քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 26քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Բաղրամյանի 1-ին նրբանցքի հ.24 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Լեռ Կամսարի փողոցի հ.24 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Էդուարդ Սուրենի Գավարյանի, Ժոզեֆ Սուրենի Գավարյանի, Լյովա Մարգարի Մարգարյանի, Ռուզաննա Մարգարի Մարգարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ**